ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա 597 **Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր** (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչատրյան
ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Սվետլանա Հարությունյան
ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրցյան
ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան
ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 42

Էլեոնորա Զաքարյան, Մարինե Միքայելյան
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 61

Մանե Տոնոյան
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան
ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրցյան
ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվետլանա Հարությունյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 113

Լիլիթ Ավետիսյան, Սոնա Մանուսյան
ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ 128
Քնարիկ Առաքելյան
ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 145
Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 153
Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 179
Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ 193
Աստղիկ Սերոբյան
ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 210
Անուշ Մկրտչյան
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 227
Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան
ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան
ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257
Նարինե Ադամյան, Իրինա Խանամիրյան
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ԱՐԺԵԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 263
Կարինե Գրիգորյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կարինե Գրիգորյան

Հոգեբանության մեջ մեծաթիվ փորձարարական հետազոտությունների արդյունքները վկայում են, որ երեխայի հոգեկան զարգացմանն առնչվող և առավել հաճախ հանդիպող խնդիրներից մեկը վախերն ու տագնապայնությունն են [2, 1, 9]: Երեխաների մեջ վախերի առկայությունը չի կարելի անուշադրության մատնել, քանի որ դա կարող է անձի զարգացման գործընթացում խնդիրների պատճառ հանդիսանալ: Չբացահայտված և հոգեբանական շտկման չենթարկված վախերը կարող են խնդիրներ առաջացնել ուսումնական գործընթացում, ծնող-երեխա փոխհարաբերություններում, ինչպես նաև բացասաբար անդրադառնալ երեխայի սոցիալական ակտիվության, հասակակիցների և մեծահասակների հետ փոխհարաբերությունների վրա: Այդ պատճառով մանկական վախերի ուսումնասիրության խնդիրը միշտ մնում է ակտուալ:

Տարբեր մշակույթներում երեխաները զարգացման ընթացքում ունենում են որոշ ընդհանուր վախեր: Սա զարգացման ընդհանուր օրինաչափությունների մասին է վկայում, երբ զարգացող հոգեկան կառույցները սոցիալական գործոնների ազդեցության տակ հիմք են հանդիսանում միևնույն վախերի առաջացման համար: Ավագ նախադպրոցական տարիքում (5-7 տարեկանում) դոմինանտ տարիքային վախը մահվան վախն է [2, 9]:

Սույն հոդվածում քննարկվում է, թե մահվան հետ կապված հարցերը որ տարիքից են սկսում հետաքրքրել երեխային, երեխաների մեջ դիտվող մահվան վախի առանձնահատկությունները, ինչպես նաև այն հիմնական պաշտպանական մեխանիզմները, որոնք երեխաներն օգտագործում են մահվան վախի հաղթահարման համար:

Երեխաների մեջ մահվան վախի հիմնախնդրի շուրջ խորհրդային հոգեբաններից առավել տարածված են Ա. Զախարովի աշխատանքները, որն ընդհանրացրել է իր կլինիկական դիտարկումները մահվան վախի տարիքային դինամիկայի վերաբերյալ: Ըստ Ա. Զախարովի՝ երեխան ավագ նախադպրոցական տարիքում առաջին անգամ զգում է, որ մահը նրա կյանքի անխուսափելի ավարտն է: Մահվան վախի առաջացումը երեխայի մեջ նշանակում է, որ նա սկսում է գիտակցել ժամանակի և տարածության մեջ տեղի ունեցող տարիքային փոփոխությունների անդառնալիությունը: Երեխան սկսում է հասկանալ, որ հասունացումն ինչ-որ փուլում

ավարտվում է մահով, որի անխուսափելիությունն անհանգստություն է առաջացնում: Որպես կանոն, երեխաներն իրենք են հաղթահարում այդ ապրումները, բայց միայն այն դեպքում, եթե ընտանիքում կենսուրախ մթնոլորտ է տիրում, ծնողներն անընդհատ հիվանդությունների, մահվան մասին չեն խոսում, և եթե ծնողների հետ հարաբերությունները հուզականորեն ջերմ և անմիջական են: Երեխայի զարգացման ընթացքում անբարենպաստ գործոնների առկայությունը և վերոնշյալ նպաստավոր պայմանների բացակայությունն ուժեղացնում են տարիքային մահվան վախը, ինչը հանգեցնում է դրա հետ կապված այլ վախերի ուժեղացման [2]:

Մահվան վախը բարոյական-էթիկական կատեգորիա է, որի առկայությունը երեխայի մեջ զգացմունքների հասունության և խորության մասին է վկայում, այդ պատճառով այն վառ արտահայտված է հուզականորեն զգայուն և տպավորվող երեխաների մեջ, որոնց վերացական մտածողությունը լավ է զարգացած [նույն տեղում]:

Ս. Էնթոնին իր «Մահվան բացահայտումը մանուկ հասակում և ավելի ուշ» աշխատանքում գրում է, որ երեխաները վաղ տարիքում բացահայտում են մահը, գիտակցում են կյանքի ընդհատման անխուսափելիությունը, վերագրում այդ գիտակցումն իրենց, և այդ բացահայտումը նրանց մեջ ուժեղ տագնապ և մահվան վախ է առաջացնում [6]:

Ըստ էքզիստենցիալ հոգեբան Ի. Յալոմի՝ երեխան վաղ տարիքից արդեն խորապես կլանված է մահվան հետ կապված հարցերով: Այս վախը հաղթահարելու համար երեխան ակտիվացնում է հետևյալ բազային պաշտպանական մեխանիզմները.

1. անհատական անխոցելիության, անկրկնելիության, անմահության վերաբերյալ համոզմունք,
2. անձնային փրկչի, պաշտպանի գոյության վերաբերյալ հավատ:

Այս երկու պաշտպանական մեխանիզմներն ամրապնդվում են ծնողների խոսքերով և կրոնական պատկերացումներով: «Յուրաքանչյուր անձ, մանկությունից սկսած, ունի յուրահատուկ լինելու իռացիոնալ համոզմունք: Հոգեկանի ոչ գիտակցական մակարդակում անձը համոզված է իր անխոցելիության և անմահության մեջ: Երեխաները սփոփում են իրենց այն մտքով, որ փոքրերին մահը չի սպառնում: Նրանք հավատում են, որ երեխաները չեն մահանում, մահանում են միայն ծերերը, իսկ ծերությունը շատ հեռու է» [11, էջ 62]:

Գ. Ռոխլինը նույնպես ուսումնասիրել է մահվան բացահայտմանն ի պատասխան երեխաների մեջ դիտվող պաշտպանական մեխանիզմները: Իր հետազոտությունների արդյունքում նա եզրակացնում է, որ նախադպրոցական տարիքի երեխաներն ընդունակ են հասկանալ մահվան անդառնալիությունը:

Նա գրում է, որ չնայած իր հետազոտությանը մասնակցող նախադպրոցական տարիքի երեխաները հասկանում են, որ մահն անխուսափելի և անդառնալի է, սակայն նրանք շատ արագ արտամղում են այդ գիտելիքը՝ հետ վերադառնալով անհատական անկրկնելիության և անխոցելիության համոզմունքին: Հետևաբար, մահվան վախը և տագնապը կարող են ակտիվացնել զանազան պաշտպանական մեխանիզմներ, ինչը կարող է խոչընդոտել երեխաների՝ մահը հասկանալու և իմաստավորելու գործընթացը: Գ. Ռոխլինը եզրակացնում է, որ նախադպրոցական տարիքի երեխաների կոգնիտիվ զարգացման մակարդակը թույլ է տալիս ձևավորել մահվան իրատեսական հայեցակարգ, ինչի արդյունքում երեխաները գիտեն մահվան մասին: Սակայն նրանց հուզական զարգացումը տեղի է ունենում այլ արագությամբ, ուստի, նրանք պաշտպանական մեխանիզմների միջոցով փորձում են պաշտպանվել մահվան իմաստավորման արդյունքում առաջացող տագնապից [10]:

Մ. Մոնտենը մահվան վախի դեմ պայքարի հետ կապված իր մոտեցումն է առաջարկում՝ նշելով, որ սովորել է հաղթահարել այդ վախը: Նա առաջարկում է «զրկել մահին իր գլխավոր խաղաթղթից՝ խորհրդավորությունից, մոտ հեռավորությունից զննել այն և հաճախ մտորել մահվան մասին» [3, էջ 381]:

Երեխաների մեջ մահվան վախի խնդրի ուսումնասիրությամբ զբաղվող հետազոտողները տարբեր տեսակետներ ունեն այն հարցի վերաբերյալ, թե մահվան հետ կապված հարցերը որ տարիքից են սկսում հետաքրքրել երեխային: Որոշ հետազոտողներ գտնում են, որ երեխաներին չափազանց հետաքրքրում է մահվան թեման, և այդ հետաքրքրությունն առաջանում է առավել վաղ տարիքում, քան ընդունված է մտածել:

Մասնավորապես, երեխաների հետ աշխատող շատ մասնագետներ, օրինակ՝ Ա. Ֆրոյդ, Մ. Կլյայն, Ա. Մաուրեր և այլք, իրենց հետազոտությունների արդյունքում եզրակացնում են, որ փոքրիկ երեխաները, անկախ այն հանգամանքից, թե արդյոք ընդունակ են հասկանալ մահն ինտելեկտուալ տեսանկյունից, ինտուիտիվ հասկանում են հարցի էությունը [մեջբերվում է ըստ II]: Ա. Մաուրերն իր վիճելի հոդվածում համարձակ ենթադրություն է անում այն մասին, որ մահը գիտակցվում է նույնիսկ նորածինների կողմից [8]:

Ա. Զախարովը գտնում է, որ նորմայում մահվան վախը պետք է վերամշակված լինի գիտակցության կողմից 6-7 տարեկանում, ինչը երեխայի հոգեկան զարգացման առավել բարձր մակարդակի, իր և շրջապատող մարդկանց մասին նոր գիտելիքների ձեռքբերման մասին է վկայում [2]: Այսպիսով, մանկական վախերի ուսումնասիրությամբ զբաղվող վերոնշյալ հետազոտողները համակարծիք են, որ արդեն շատ փոքր տարիքից երեխան խորապես կլանված է մահվան հետ կապված հարցերով:

Ի տարբերություն վերոնշյալ հեղինակների, հոգեդինամիկ ուղղության հիմնադիր Զ. Ֆրոյդի կարծիքով՝ անգիտակցականում մահվան վախ գոյություն չունի: Զ. Ֆրոյդը գտնում էր, որ փոքր երեխան չի գիտակցում մահվան իրական հետևանքները: Երեխայի պատկերացումն այն մասին, թե ինչ է նշանակում «մահացած լինել», ընդհանուր ոչինչ չունի մեծահասակների պատկերացումների, այն ամենի հետ, ինչի պատճառով մեզ համար այդքան անտանելի է մտածել մահվան մասին: Ըստ Զ. Ֆրոյդի՝ մահվան վախն իմաստ չունի երեխայի համար: Նա իր կլինիկական դիտարկումներում հիշատակում է մի դեպք, երբ երեխան հոր հանկարծակի մահից հետո ասում է. «Ես հասկանում եմ, որ հայրիկը մահացել է, բայց ես չեմ հասկանում, թե ինչու նա չի եկել ճաշելու» [5, էջ 120]: Բացի այդ, երեխաների համար, որոնք չեն տեսել մահվանը նախորդող տառապանքը, մահացած լինել նշանակում է բացակայել: Երեխայի համար միևնույն է, թե որն է այդ բացակայության պատճառը: Ըստ Զ. Ֆրոյդի՝ երեխան նույնիսկ 8-9 տարեկանում քիչ գիտելիք ունի մահվան մասին, հետևաբար՝ քիչ է վախենում:

Զ. Ֆրոյդը համոզված էր, որ անգիտակցականում մահվան վախ գոյություն չունի և որպես ապացույց բերում էր հետևյալ փաստարկները.

- մարդու անհատական փորձում չկա ոչ սեփական մահվան փորձ, ոչ այնպիսի իրադարձություն, որը կարող է նմանվել մահվանը,
- սեփական մահն անհնար է հասկանալ, անհնար է պատկերացնել, քանի որ երբ անձը փորձում է պատկերացնել, միևնույն է՝ դիտորդի դերում է:

Ըստ Զ. Ֆրոյդի՝ մահվան վախն ընկած է կաստրացիայի և մորից բաժանման (սեպարացիայի) վախերի հիմքում: Նրա հետ համակարծիք է Ջ. Բոուլբին, որը մորից սեպարացիան նորածնի համար ողբերգական իրադարձություն էր համարում: Ջ. Բոուլբին եզրակացնում է, որ սեպարացիան տագնապի առաջացման առաջնային գործոն է, այսինքն՝ սեպարացիայի տագնապը հիմնաքարային տագնապ է, իսկ տագնապի մնացած աղբյուրները, այդ թվում նաև մահվան վախը, հուզական նշանակություն են ձեռք բերում սեպարացիայի տագնապի հետ նույնականացման արդյունքում [մեջբերվում է 7]: Այսինքն՝ մահը վախ է առաջացնում, որովհետև սեպարացիայի տագնապ է արթնացնում: Ջ. Բոուլբին հղում է անում Ա. Ջերսիլդի հետազոտությանը, որի արդյունքում հետազոտողը եզրակացնում է, որ մահվան վախը հազվադեպ է հիշատակվում 9 տարեկանից ցածր երեխաների կողմից: Ըստ Ա. Ջերսիլդի հետազոտության արդյունքների՝ երեխաները վախենում են կենդանիներից, մթությունից, բարձրությունից, հոգիներից, առևանգողներից, բայց չունեն մահվան վախ [7]:

Սակայն ո՛չ Ջ. Բոուլբին, ո՛չ Ա. Ջերսիլդը չեն պարզաբանում, թե բոլոր այս վախերն ինչ են նշանակում երեխայի համար: Ակնհայտ է, որ այս

վախերը երեխայի ֆիզիկական գոյության սպառնալիքի հետ են կապված: Ռ. Մեյը գտնում է, որ Ա. Ջերսիլդի հետազոտությունը ցուցադրում է տագնապի փոխակերպումը վախի: Ըստ Ռ. Մեյի՝ երեխաների վախերը բազային տագնապի (մահվան հետ կապված տագնապ) օբյեկտիվացված ձևերն են [4]: Մանկական վախերի ուսումնասիրությամբ զբաղվող Վ. Գարբուզովը գտնում է, որ մահվան մասին մտքերն ընկած են մանկական ֆոբիաների մեծ մասի հիմքում և դրսևորվում են կամ անմիջականորեն, կամ անուղղակի ձևով՝ բարձրությունից, կենդանիներից, ծնողների մահվանից և այլ վախերի տեսքով [1]:

Մենք համակարծիք ենք այն գիտնականների հետ, որոնք գտնում են, որ բոլոր վախերը կապված են երեխայի ֆիզիկական գոյության սպառնալիքի հետ, և որ բոլոր վախերի հիմքում ընկած է մահվան վախը:

Քննարկվող խնդրի վերաբերյալ հետազոտողների հակասական կարծիքների առկայությունը, հավանաբար, ուսումնասիրվող խնդրի անբավարար փորձարարական ուսումնասիրության հետ է կապված: Խոսքի զարգացման հետ կապված հետազոտությունները դրդում են շատ կլինիկական և տարիքային հոգեբանների դիտարկել մահվան գիտակցման սկիզբն ավելի ուշ տարիքում, քան վկայում են անմիջական դիտարկումները: Այս առնչությամբ Ի. Յալոմը կարծիք է հայտնում, որ հետազոտողները չափազանց խիստ պահանջներ են ներկայացնում փաստերի ապացուցելիությանը: «Մի՞թե երեխան պետք է կարողանա բնորոշել «կենդանի» կամ «մահացած» հասկացությունները, որպեսզի իր էության խորքում կարողանա զգալ, որ ինչ-որ ժամանակ նա այլևս չի լինելու երկրի վրա, ինչպես միջատը, կենդանին կամ ցանկացած այլ մարդ» [11, էջ 54]:

Ամփոփելով կարելի է եզրակացնել, որ ավագ նախադպրոցական տարիքում դոմինանտ տարիքային վախը մահվան վախն է, որը մնացած բոլոր վախերի կապող օղակն է և ընկած է դրանց հիմքում: Հետազոտողները տարակարծիք են այն հարցի շուրջ, թե որ տարիքից են երեխային սկսում հետաքրքրել մահվան հետ կապված հարցերը: Նրանց մեծ մասը հակված է մտածել, որ երեխաների մեջ հետաքրքրությունը մահվան նկատմամբ առաջանում է առավել վաղ տարիքում, քան ընդունված է մտածել: Անկախ այն հանգամանքից, թե արդյոք երեխաներն ընդունակ են հասկանալ մահն ինտելեկտուալ տեսանկյունից, նրանք ինտուիտիվ հասկանում են հարցի էությունը: Տառապանք պատճառող մահվան վախը հաղթահարելու համար երեխան ակտիվացնում է պաշտպանական մեխանիզմներ, որոնք հիմնվում են անհատական անխոցելիության և անկրկնելիության վերաբերյալ համոզմունքի և անձնային փրկչի գոյության վերաբերյալ հավատի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Гарбузов, В.** *Нервные и трудные дети*, СПб., Астрель, 2006.
2. **Захаров, А.** *Дневные и ночные страхи у детей*, Серия: Психология ребёнка, СПб, Издательство «Союз», 2004.
3. **Монтень, М.** *Опыты.* М., Мир книги, Литература, 2006.
4. **Мэй, Р**. *Экзистенциальные основы психотерапии*, М., Апрель, Пресс & ЭКСМО, Пресс, 2001.
5. **Фрейд, З.** *Толкование сновидений*. Минск, Харвест, 2004.
6. **Anthony, S.** *The discovery of death in childhood and after*, New York, Basic Books, 1972
7. **Jersild, A**. *Children's Fears,* Jersild Press, 2007.
8. **Maurer, A.** Maturation of Concepts of Death. *British Journal of Medicine and Psychology*, 39, 1996, pp. 35–41.
9. **Ollendick, T., Horsch, L.** Fears in children and adolescents: Relations with child anxiety sensitivity, maternal overprotection and maternal phobic anxiety. *Behavior Therapy*, N 38, 2007, pp. 402-411.
10. **Rochlin, G**. How younger children view death and themselves. in E.A. Grollman (ed), Explaining death to children, Boston, Beacon, 1967, pp. 51-85.
11. **Yalom, I.** *Existential Psychotherapy*, New York, Basic Books, 1980.